



Հաստատված է

ԳՊՀ գիտական խորհրդի 2013թ.

փետրվարի 8-ի թիվ 1 նիստում

Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան

«8» փետրվարի 2013թ.

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ-ԳՈՐԾԱՏՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ,  
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**I. Ընդհանուր դրույթներ**

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) համալսարան-գործառու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Համալսարանի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակն է Համալսարանի ուսանողների և շրջանավարտների կարիերայի ապահովմանը, աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, շրջանավարտների և Համալսարանի միջև կապերի ամրապնդմանը, ինչպես նաև Համալսարանի և գործատուների՝ տարբեր կազմակերպությունների ու ձեռնարկությունների համագործակցությանը միտված ծրագրերի իրականացումը:
2. Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրության համաձայն՝ Համալսարանի կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:
3. Կենտրոնը սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրների լուծման նպատակով համագործակցում է Համալսարանի այլ ստորաբաժանումների, ինչպես նաև արտա-համալսարանական (պետական, հասարակական, միջազգային և այլն) կազմակերպությունների հետ՝ սահմանված կարգի համաձայն:
4. Կենտրոնն ունի Համալսարանի խորհրդանշով ձևաթուղթ (պաշտոնաթուղթ), համացանցային կայքէջ (<http://www.career.gsu.am/>):
5. Կենտրոնի գործունեությունը ֆինանսավորվում է Համալսարանի կողմից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և Համալսարանի կանոնադրությամբ չարգելվող այլ աղբյուրներից:
6. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումը իրականացվում են Համալսարանի ռեկտորի ներկայացմամբ՝ Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

## **II. Կենտրոնի նպատակներն ու խնդիրները**

7. Կենտրոնի նպատակներն են՝

1) ապահովել Համալսարանի և գործատուների համագործակցությունը,

2) օգնել ուսանողներին ինքնահաստատվելու իրենց մասնագիտության մեջ, ուղղորդել նրանց համապատասխան աշխատանքի ձեռքբերմանը, նպաստել ուսանողների, շրջանավարտների և գործատուների միջև կապերի ամրապնդմանը, վերջիններիս մասնագիտական հմտությունների զարգացմանը,

3) աջակցել Համալսարանի շրջանավարտների անհատական կարողությունների բացահայտմանը և խթանել աշխատաշուկայում նրանց հետագա մրցունակության բարձրացմանը,

4) ապահովել հետադարձ կապը գործատուի հետ և ուսումնասիրել Համալսարանի կողմից մասնագետների պատրաստման վերաբերյալ գործատուի առաջարկները և նկատառումները,

5) ապահովել Համալսարանի շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվական բազաների կազմումը, մշտական թարմացումը և հետադարձ կապը:

8. Կենտրոնի խնդիրներն են՝

1) Համալսարանի շրջանավարտների զբաղվածության խնդիրների ուսումնասիրումը,

2) Գեղարքունիքի մարզի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրումը և Համալսարանի ուսանողների մրցունակության ապահովմանն ուղղված ծրագրերի իրականացումը,

3) ուսանող-շրջանավարտ-գործատու փոխհարաբերությունների հաստատումը, համագործակցության ծրագրերի մշակումը և համատեղ աշխատանքների իրականացումը,

4) աշխատաշուկայի թափուր աշխատատեղերի և առաջարկվող ծրագրերի, ինչպես նաև ուսանողական ռեսուրսների մասին տեղեկատվության ստեղծումը և տարածումը,

5) Համալսարանի ուսանողների պրակտիկայի, ժամանակավոր աշխատանքի, վերապատրաստման և այլ աշխատանքային ձևերի վերաբերյալ ծրագրերի մշակումը և իրականացումը,

6) արդեն իսկ կարիերա ստեղծած Համալսարանի շրջանավարտների համախմբումը և ներգրավումը Կենտրոնի գործունեության մեջ:

## **III. Կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները.**

9. Կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են՝

1) Համալսարանի ուսանողների հետ տարվող աշխատանքների պլանավորում և իրականացում, նրանց մասնագիտական որակի բարձրացման և հետագայում աշխատանք ապահովելու նպատակով կլոր սեղանների, գիտաժողովների, քննարկումների և այլ միջոցառումների կազմակերպում,

- 2) կարիերայի պլանավորման, աշխատանք գտնելու ձևերի, հարցազրույց անցնելու հմտությունների վերաբերյալ սեմինարների նախապատրաստում և անցկացում,
- 3) Համալսարանի ուսանողների և շրջանավարտների հետ հանդիպումների և նրանց աջակցությամբ աշխատաշուկայում արդի պահանջների, մասնագիտական կողմնորոշումների, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման և այլ խնդիրների վերաբերյալ ուսումնասիրությունների և համապատասխան աշխատանքների նախապատրաստում և իրականացում,
- 4) Համալսարանի ուսանողների և գործատուների մասին տեղեկատվության ուսումնասիրում, նրանց փոխհարաբերությունների զարգացման ուղիների մշակում, վերլուծում և ամփոփում,
- 5) Համալսարանի ուսանողների և տեղական-տարածաշրջանային գործատուների միջև հնարավոր աշխատանքային հարաբերությունների ձևավորում, տարբեր կազմակերպությունների հետ համաձայնագրերի կնքում, դրանց իրականացման ապահովում,
- 6) Համալսարանի ուսանողների և շրջանավարտների աշխատանքի տեղավորման վերաբերյալ հիմնախնդիրների մշակում և ներկայացում Համալսարանի ռեկտորատին, ինչպես նաև մասնակցություն այդ խնդիրների լուծմանը,
- 7) Կենտրոնի էլեկտրոնային ռեսուրսների (այդ թվում՝ էլեկտրոնային գրադարանի) ստեղծում, ուսանողական էլեկտրոնային ամփոփումների (ռեզյումեների) համակարգում և գործատուների շրջանում դրանց հասանելիության ապահովում,
- 8) աշխատանքային տարբեր հայտարարությունների և մրցույթների մասին տեղեկատվության տրամադրում, տեղեկատվական նյութերի տպագրում և տարածում,
- 9) Տարբեր ցուցահանդեսների, աշխատանքի տոնավաճառների, շնորհանդեսների, գործատուների հետ հանդիպումների կազմակերպում,
- 10) Համալսարանի դիմորդների համար բաց դռների կազմակերպում և Համալսարանի ուսանողների և շրջանավարտների հետ կողմնորոշող հանդիպումների անցկացում,
- 11) Համալսարանի ֆակուլտետների, դեկանատների, ուսանողական միավորումների և այլ ներքին ստորաբաժանումների հետ սերտ համագործակցություն,
- 12) Համալսարանի և գործատուների միջև արդյունավետ կապի ստեղծում, կրթական ծրագրերի վերաբերյալ գործատուների առաջարկների ուսումնասիրում և առաջարկությունների ներկայացում,
- 13) Համալսարանի կանոնադրությունից և սույն կանոնադրությունից բխող գործունեության այլ տեսակների իրականացում:

#### **IV. Կենտրոնի կառուցվածքը և կառավարումը.**

10. Կենտրոնի աշխատանքների համակարգումը Համալսարանի ռեկտորի հրամանով վերապահվում է Համալսարանի ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորին:

11. Կենտրոնն ունի չորս աշխատակից՝

- 1) Համակարգող,
- 2) Գործատուների հետ համագործակցության ապահովման մասնագետ,

3) Շրջանավարտների հետ տարվող աշխատանքների ապահովման մասնագետ,

4) Տեղեկատվության ապահովման և տեխնիկական սպասարկման մասնագետ:

12. Կենտրոնը ղեկավարում է համակարգող պրոռեկտորի ներկայացրած և Համալսարանի ռեկտորի կողմից նշանակված համակարգողը:

13. Կենտրոնն ունի 12 անդամներից բաղկացած խորհուրդ, որի կազմում են.

1) ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորը,

2) կենտրոնի համակարգողը,

3) ԳՊՀ չորս շրջանավարտներ,

4) ԳՊՀ բակալավրիատի երեք ուսանող,

5) ԳՊՀ մագիստրատուրայի երեք ուսանող:

14. Անհրաժեշտության դեպքում Կենտրոնի կազմում կարող են ընդգրկվել Կենտրոնի գործառույթներից բխող խնդիրներով զբաղվող մասնագետներ, ինչպես նաև հասարակական կարգով ներգրավված աշխատակիցներ:

15. Կենտրոնի համակարգողը կազմակերպում և վերահսկում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը և պատասխանատվություն է կրում Կենտրոնի աշխատանքների լիարժեք և պատշաճ իրականացման համար: